


ՀՀ բանկային համակարգի 2009-ի 2-րդ եռամսյակի գործունեության համառոտ վերլուծությունը

2009-ի երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ բանկերն իրականացրել են զգուշավոր (ցածր ռիսկային) գործունեություն, որի արդյունքում նվազել են համակարգի որոշ հիմնական ցուցանիշների թե եռամսյակային աճերը, և թե իրենք՝ ցուցանիշները: Հարկ է նշել, որ նման գործելակերպի հիմնական պատճառն առավելապես պայմանավորված է եղել դեռևս շարունակվող համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքներով, որը տրամաբանորեն չէր կարող իր ազդեցությունը չթողնել նաև բանկերի կառավարման համակարգի վրա: Այնուամենայնիվ կարելի է արձանագրել, որ հաշվետու եռամսյակի ընթացքում բանկային համակարգը նախորդ եռամսյակի համեմատ գործել է ավելի արդյունավետ, ապահովել է որոշ ցուցանիշների զժով աճ, այդ թվում՝ մաքուր շահույթի զժով, որն առաջին եռամսյակի համանուն ցուցանիշը գերազանցել է մոտ երեք անգամ: Միևնույն ժամանակ փաստենք, որ համակարգի վեց բանկեր հաշվետու կիսամյակը փակել են վնասով, իսկ որոշ բանկեր առաջին եռամսյակի համեմատ 2-րդ եռամսյակում ապահովել են մաքուր շահույթի ավելի բարձր ցուցանիշ:

Այսպես, համակարգի ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում աճել են 0.3 %-ով կամ 3.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 1144.9 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա 2-րդ եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվներն ավելացել էին 89.6 մլրդ դրամով, իսկ այս տարվա 1-ին եռամսյակում՝ մոտ 105.2 մլրդ դրամով, որը հիմնականում հետևանքն է դրամի նկատմամբ դոլարի արժևորման:

Վարկային ներդրումներն 2-րդ եռամսյակի ընթացքում նվազել են 2.9 %-ով կամ 19.6 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 24.5 %-ով կամ 18.8 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 656.3 և 57.8 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա 2-րդ եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել էին 13.7 %-ով կամ 65.8 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 22.5 %-ով կամ 22.5 մլրդ դրամով: Համեմատության համար կարելի է նշել, որ այս տարվա 1-ին եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 4.6 %-ով կամ 29.4 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 4.2 %-ով կամ 3.3 մլրդ դրամով: 2009-ի հունիսի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 57.3 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնենասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 57.0 %-ը կամ 374.2 մլրդ դրամ, և այս ցուցանիշը հաշվետու եռամսյակի ընթացքում նվազել է 5.8 %-ով կամ 23.2 մլրդ դրամով, ընդ որում՝ 2008-ի 2-րդ եռամսյակում նույնանուն ցուցանիշն աճել էր 7.9 %-ով կամ 18.5 մլրդ դրամով, միաժամանակ ավելացնենք, որ տնտեսությանը տրված վարկերն ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում աճել էին 62.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է եղել արտարժույթային վարկերի վերազնահատման դրական արդյունքով:

2009-ի հունիսի 30-ի դրությամբ վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)




Ֆիզիկական անձանց տրված վարկերը հաշվետու եռամսյակում աճել են 0.5 %-ով կամ 1.3 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 260.6 մլրդ դրամ, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 187.8 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 28.6 %-ը, իսկ հիփոթեքային վարկերը՝ 85.3 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 13.0 %-ը: Հաշվետու եռամսյակի ընթացքում 1.3 տոկոսային կետով աճել է ֆիզիկական անձանց վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում. այն հունիսի 30-ի դրությամբ կազմել է 39.7 %: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 20.4 % կամ 48.9 մլրդ դրամ, իսկ այս տարվա առաջին եռամսյակում այն նվազել էր 12.8 %-ով կամ 38.2 մլրդ դրամով: 2009-ի 2-րդ եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալը նվազել է 11.4 %-ով կամ 24.1 մլրդ դրամով, ընդ որում՝ հիփոթեքային վարկերի ծավալը նվազել է 3.1 %-ով կամ 2.7 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ

ճախորդ տարվա 2-րդ եռամսյակում վերը նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել են 8.1 % կամ 14.6 մլրդ դրամ և 21.8 % կամ 13.0 մլրդ դրամ, իսկ այս տարվա 1-ին եռամսյակում սպառողական վարկերը նվազել էին 7.6 %-ով կամ 17.4 մլրդ դրամ, հիփոթեքային վարկերը աճել 3.8-ով % կամ 3.2 մլրդ դրամով:

Երկրորդ եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվների գծով առավելագույն աճ ապահովել է «Հայբիզնեսբանկը», և այն կազմել է 8.1 մլրդ դրամ, տնտեսության վարկավորման գծով՝ «ԱՆԵԼԻՔ Բանկը»՝ մոտ 7.9 մլրդ դրամ, ֆիզիկական անձանց վարկավորման գծով՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը»՝ 15.8 մլրդ դրամ, սպառողական վարկերի գծով՝ «ԲՏԱ Բանկը»՝ 1.1 մլրդ դրամ և հիփոթեքային վարկերի գծով՝ «Հայբիզնեսբանկը»՝ 336.2 մլն դրամ:


Պետական գանձապետական պարտատոմսերում ՀՀ-ում գործող բանկերից առավելագույն ներդրումներն ունեն «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը»՝ 8.8 մլրդ դրամ և «Յունիբանկը»՝ 6.4 մլրդ դրամ:

Համակարգում վարկային ներդրումների փոփոխման դինամիկան



ՀՀ բանկային համակարգի ակտիվները և վարկային ներդրումները 2009-ի հունիսի 30-ի դրությամբ


Մլրդ դրամ



2009-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 888.5 մլրդ դրամ, որը 2-րդ եռամսյակում նվազել է 1.0 %-ով կամ 9.1 մլրդ դրամով:

Հարկ է նշել, որ վերոնշյալ ցուցանիշն անցած տարվա նույն եռամսյակում աճել էր 11.7 %-ով կամ 74.0 մլրդ դրամով, իսկ այս տարվա 1-ին եռամսյակում՝ 12.5 %-ով կամ 99.8 մլրդ դրամով, որը նույնպես պայմանավորված էր, ինչպես ակտիվների դեպքում, արտարժութային պարտավորությունների վերագնահատման դրական արդյունքով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդների (ցպահանջ և ժամկետային) աճը կազմել է 3.4 % կամ 9.2 մլրդ դրամ, իրավաբանական անձանց համախառն ավանդների նվազումը՝ 2.3 % կամ 6.2 մլրդ դրամ և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 277.1 և 267.9 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների աճը կազմել է 0.5 % կամ 1.1 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 4.7 % կամ 5.5 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի ընթացքում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 23.0 %-ով կամ 44.9 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել 6.4 %-ով կամ 14.5 մլրդ դրամով, ընդ որում՝ 17.5 %-ի կամ 24.5 մլրդ դրամի աճ էր գրանցվել ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների գծով: Ասվածին միաժամանակ ավելացնենք, որ ներգրավված ավանդների ծավալն աճել էր նաև ընթացիկ տարվա 1-ին եռամսյակի ընթացքում. այսպես՝ ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 14.3 %-ով կամ 33.5 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 24.4 %-ով կամ 53.7 մլրդ դրամով, որը, ինչպես վերևում նշվեց, հիմնականում պայմանավորված էր արտարժութային ավանդների վերագնահատման դրական արդյունքով: Վերոնշյալին նաև ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 61.3 %-ը:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2009-ի հունիսի 30-ի դրությամբ (մլրդ դրամ)




- Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ
- Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ
- Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ
- Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ


Հաշվետու եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ներգրավման գծով առավելագույն աճ ապահովել է «Արդշինինվեստբանկը», որը կազմել է 1.6 մլրդ դրամ:

Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային դեպոզիտների ծավալով առաջատար բանկը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» է՝ 44.9 մլրդ դրամով, նրան հաջորդում են՝ «Յունիբանկը»՝ 42.8 մլրդ դրամով, «Արդշինինվեստբանկը»՝ 40.2 մլրդ դրամով, «Կոմվերս Բանկը»՝ 32.6 մլրդ դրամով և «ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ»՝ 32.2 մլրդ դրամով: Երկրորդ եռամսյակում վերոնշյալ ցուցանիշի ներգրավման լավագույն արդյունք ապահովել է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ», որը բացարձակ մեծությամբ կազմում է 11.6 մլրդ դրամ:


Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան



Համակարգում ժամկետային ավանդների փոփոխման դինամիկան




ՀՀ բանկային համակարգի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) 2009-ի հունիսի 30-ի դրությամբ




ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը 2-րդ եռամսյակի ընթացքում աճել է 5.1 %-ով կամ 12.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 256.4 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կանոնադրական կապիտալի, ինչպես նաև կուտակված շահույթի ավելացման հաշվին: Հարկ է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ավելացել էր 8.5 %-ով կամ 15.5 մլրդ դրամով, իսկ ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում՝ 2.3 %-ով կամ մոտ 5.4 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից մեկը՝ կուտակված շահույթը, հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 1.8 %-ով կամ 1.3 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 71.6 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 27.9 %-ը: Հարկ է փաստել, որ կուտակված շահույթը նախորդ տարվա 2-րդ եռամսյակում աճել էր 11.0 %-ով կամ 5.0 մլրդ դրամով, այս տարվա 1-ին եռամսյակում՝ 4.0 %-ով կամ մոտ 2.7 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 7.7 %-ով կամ 12.1 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 167.5 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 65.3 %-ը: Միաժամանակ արձանագրենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում կանոնադրական կապիտալը ավելացել էր 8.5 %-ով կամ 10.3 մլրդ դրամով, իսկ ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում՝ 2.0 %-ով կամ 3.0 մլրդ դրամով:

Հաշվետու եռամսյակի ընթացքում կանոնադրական կապիտալը համալրվել է «Ամելիբ բանկի» և «Հայբիզնեսբանկի» կողմից համապատասխանաբար 9.0 և 3.1 մլրդ դրամով:

Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան



ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը, կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը 2009-ի հունիսի 30-ի դրությամբ




ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է մոտ 3.25 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2008-ի 2-րդ եռամսյակում ստացված մաքուր շահույթի ծավալին զիջել է 2.6 մլրդ դրամով, իսկ այս տարվա 1-ին եռամսյակում ապահովված շահույթի ծավալը գերազանցել է 2.14 մլրդ դրամով: Համակարգի վեց բանկեր ընթացիկ տարվա առաջին կիսամյակը փակել են վնասով և ընդհանուր վնասը կազմել է 1.9 մլրդ դրամ: Անցած տարվա եռամսյակների համեմատ համակարգում վերոնշյալ ցուցանիշի արձանագրված ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է դեռևս շարունակվող համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունով: Այնուամենայնիվ, որոշ բանկերի հաջողվել է հաշվետու եռամսյակում ապահովել մաքուր շահույթի համեմատական բարձր ցուցանիշ. այսպես՝ մաքուր շահույթի գծով «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը» հաշվետու եռամսյակում ապահովել է 859.2 մլն դրամ, իսկ

«Արդշինհինվեստբանկը»՝ 567.6 մլն դրամ: Ասվածին նաև ավելացնենք, որ հաշվետու կիսամյակի ընթացքում համակարգի բանկերից մաքուր շահույթի առավելագույն ծավալ ապահովել են «Արդշինհինվեստբանկը»՝ 1.88 մլրդ դրամ և «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը»՝ 1.56 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ փաստենք, որ հաշվետու եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 39.4 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 35.6 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 2.8 մլրդ դրամով կամ 7.7 %-ով և 6.8 մլրդ դրամով կամ 23.5 %-ով: Իսկ համադրելով ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի հետ՝ ապա կարելի է փաստել, որ հաշվետու եռամսյակում ապահովվել է 8.7 մլրդ դրամ պակաս եկամուտ, փոխարենը կատարվել է անհամեմատ ավելի քիչ ծախս՝ 10.2 մլրդ դրամի: Հիշեցման կարգով նշենք, որ այս տարվա առաջին եռամսյակում ստացված եկամուտների և կատարված ծախսերի գծով արձանագրված բարձր արդյունքները կապված էր նաև մարտ ամսին դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքի կտրուկ բարձրացման հետ: Կարելի է նաև նշել, որ հաշվետու եռամսյակում համակարգի հաշվեկշռային շահույթը կազմել է 3.9 մլրդ դրամ, որը զիջել է մոտ 3.9 մլրդ դրամով կամ 50.0 %-ով նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշին և 1.6 մլրդ դրամով կամ 69.6 %-ով գերազանցել այս տարվա 1-ին եռամսյակի համանուն ցուցանիշը: Շարադրվածին միայն ավելացնենք, որ հաշվետու կիսամյակի ընթացքում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի գծով առաջատարը «Արդշինհինվեստբանկն» է՝ համապատասխանաբար 16.4 և 14.1 մլրդ դրամ գումարներով, իսկ հաշվեկշռային շահույթի ամենամեծ ծավալը նույնպես ապահովել է «Արդշինհինվեստբանկը»՝ մոտ 2.3 մլրդ դրամ:

2009-ի առաջին կիսամյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, հունիսի 30-ի դրությամբ կազմել է 1.9 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 0.4 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության անկում անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն նվազել է 4.9 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 1.06 տոկոսային կետով: Վերը նշված առաջին ցուցանիշի (ROE) ամենաբարձր արդյունքն երկրորդ եռամսյակի վերջում ապահովել է «Արդշինհինվեստբանկը»՝ 8.29 %, իսկ երկրորդ ցուցանիշինը (ROA)՝ «ԲՏԱ բանկը»՝ 2.76 %:

ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշների գծով տեղեկություններն, ըստ բանկերի, արտացոլված են աղյուսակ 1-ում:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2009-ի հունիսի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշները ըստ բանկերի,
դրանց աճը երկրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրավված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Գ/Գ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	տեղը հա- մա- կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	տեղը հա- մա- կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	տեղը հա- մա- կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ	Զբաշ. շահույթ I,II-եր.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ	143220,3	1,7	1	86562,9	-11,7	115210,9	1,2	2	16445,1	3,9	28009,4	3,4	1	14567,2	0,0	10316,1	1563,0
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստ.	133948,7	4,5	2	68012,9	-10,8	118842,5	4,8	1	37189,3	-4,7	15106,3	1,5	5	2437,6	0,0	12558,1	-151,5
3	Արդշինհիմնվեստբանկ	115043,6	-5,0	3	63710,3	-14,6	88060,0	-6,8	3	24301,4	7,1	26983,5	1,5	2	15513,6	0,0	7971,7	1879,4
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	99296,6	-6,2	4	67552,7	-9,9	76129,1	-7,1	4	13281,3	6,3	23167,6	-3,1	3	13906,2	0,0	5055,6	-802,7
5	Կոմվերս Բանկ	77203,2	2,9	6	41293,4	-8,4	64167,9	2,9	7	13961,8	-4,6	13035,3	2,8	7	1296,4	0,0	8964,6	-311,9
6	ՅուՆիբանկ	76225,1	-2,2	7	46171,8	-3,9	64907,9	-0,8	6	37108,2	3,0	11317,2	-9,2	8	8599,7	0,0	3347,0	297,4
7	Հայէկոնոմբանկ	44591,9	-11,8	9	25848,3	0,9	36482,9	-13,4	9	5337,1	-0,4	8109,0	-3,6	14	2333,3	0,0	5329,0	-353,5
8	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	86169,0	6,5	5	47416,1	31,0	65405,9	8,3	5	6276,2	37,0	20763,1	1,3	4	18228,4	0,0	2660,0	554,9
9	Ինեկոբանկ	42965,7	-11,3	10	25072,8	-7,7	33552,6	-14,2	10	7832,2	-8,1	9413,1	0,6	12	2353,2	0,0	5300,4	171,4
10	Հայբիզնեսբանկ	54452,9	17,6	8	29809,3	11,4	44374,7	12,4	8	10969,3	2,2	10078,2	47,6	9	8050,0	61,0	1870,8	116,3
11	Անելիք Բանկ	42540,6	11,5	11	30139,8	48,0	27681,9	-14,8	12	5850,5	-12,0	14858,8	163,1	6	14300,0	169,8	748,5	-165,8
12	Առէկսիմբանկ	33757,6	-12,5	13	18655,5	5,4	23795,3	-17,7	13	7039,6	0,2	9962,3	2,8	10	8497,3	0,0	1207,4	13,1
13	Արցախբանկ	38098,4	2,9	12	27160,5	3,1	32063,1	2,5	11	3510,2	1,6	6035,3	4,9	18	2544,4	0,0	2906,0	342,1
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	28062,6	0,3	14	11851,7	-17,9	20446,6	0,5	15	3762,2	-12,4	7616,0	-0,2	15	6128,0	0,0	1134,3	43,5
15	ԱրմՍվիսԲանկ	26602,1	4,8	15	9393,7	22,9	20951,8	7,6	14	1840,8	-4,2	5650,3	-4,3	19	5001,0	0,0	553,7	94,6
16	Զարգ. Հայկական Բանկ	16713,6	0,7	18	10463,4	-1,3	10661,8	0,2	17	4508,3	-10,1	6051,8	1,6	17	4556,7	0,0	1138,8	356,6
17	Պրոմեթեյ Բանկ	21730,0	16,8	16	8479,3	-3,3	12296,2	32,5	16	1026,0	-3,2	9433,8	1,2	11	7200,0	0,0	2185,6	402,5
18	Կասկադ Բանկ	12824,3	-3,8	19	7638,0	-3,6	7180,4	-7,3	19	1030,3	-3,3	5643,8	1,1	20	5535,0	0,0	-158,5	102,7
19	Բիբլոս Բանկ Հայաստան	18665,9	6,7	17	12992,7	15,8	10421,8	12,9	18	1249,9	-13,8	8244,1	-0,2	13	8382,2	0,0	-138,9	31,8
20	ԲՏԱ Բանկ	8987,3	-8,8	22	5224,2	-7,7	3605,7	-15,7	22	269,3	-20,3	5381,5	-3,4	22	6520,0	0,0	-1164,8	214,7
21	Պրոկրեդիտ Բանկ	12448,2	1,7	20	8593,1	9,4	7066,4	7,2	20	1740,3	39,4	5381,8	-4,6	21	6090,0	0,0	-708,2	-112,8
22	Մելլաթ Բանկ	11344,0	2,4	21	4307,5	-7,1	5198,9	5,4	21	14,8	-79,1	6145,1	0,0	16	5500,0	0,0	565,3	70,5
	Ընդամենը	1144891,6	0,3		656349,9	-2,9	888504,3	-1,0		204544,1	0,5	256387,3	5,1		167540,2	7,7	71642,5	4356,3